ՀՏԴ : 929:32(479.25) ՄՅԱՍՆԻԿՅԱՆ
DOI: 10.54503/0135-0536-2026.2-18

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
ԾՆՆԴՅԱՆ 140-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՆՈՒՆ ՀԱՅԸ. ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆ*

ԷԴԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

Բանալի բառեր՝ Ալեքսանդր Մյասնիկյան, Նոր Նախիջևան, Մոսկվա, Լազարյան ճեմարան, Միքայել Նալբանդյան, Արևմտյան ռազմաճակատ, գլխավոր հրամանատար, կենտգործկոմի նախագահ, Խորհրդային Հայաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ:

Ամփոփում

Խորհրդային պետական, կուսակցական և ռազմական ականավոր գործիչ, հրապարակախոս ու գրականագետ Ալեքսանդր Աստվածատուրի (Ֆեոդոր) Մյասնիկյանը (Մյասնիկով, կեղծանունը՝ Ալ. Մարտունի, 1881–1925) հայոց նորագույն պատմության մեծագույն դեմքերից է, որի կարճատև կյանքն ու բազմաբեղուն գործունեությունը սերտորեն կապված են եղել նաև հայ ժողովրդի ազատության ու ազգային վերածննդի հետ:

Նոր Նախիջևանի (ներկայիս Դոնի Ռոստովի շրջագծում) հայ-ռուսական միջավայրը, դպրոցական ուսումնառությունը՝ տեղի ծխական ու թեմական դպրոցներում (սեմինարիա), ապա՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում, նպաստեցին Մյասնիկյանի հայրենասիրական, ազգային դիմագծի ձևավորմանը, իսկ կրթության շարունակությունը Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում, ինչպես նաև մասնակցությունը Դոնի Ռոստովում ու Մոսկվայում սկսված համառուսաստանյան գործադուլներին, ցույցերին ու դեկտեմբերյան զինված ապստամբությանը, խթանեցին Ալ. Մյասնիկյանի մտածողության զարգացումը ու հասարակական-քաղաքական հայացքների ձևավորումը, ազգային հեղափոխական ու կուսակցական գործչի ընդունակությունների և կազմակերպչական ունակությունների բացահայտումը:

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին նրա մասնակցությունը ռազմական գործողություններին, ստացած շքանշաններն ու մեդալները, ապա

* Ներկայացվել է 19. V. 2026 թ., գրախոսվել է 27. V. 2026 թ., ընդունվել է տպագրության 18. VI. 2026 թ.:

© Հեղինակ/ներ, 2026: Հասանելի է Creative Commons Attribution 4.0 Licence-ին համապատասխան:

քաղաքացիական պատերազմի տարիներին հերոսական ու անձնուրաց պայքարը հակահեղափոխական, սպիտակգվարդիական ուժերի և օտարերկրյա ինտերվենտների՝ գերմանալեհական ու չեխոսլովակյան զավթիչների դեմ, ենթասպայից գեներալի աստիճանին հասնելը նպաստեցին նրա՝ տաղանդավոր ռազմական գործչի ընդունակությունների դրսևորմանը:

Մյասնիկյանի՝ կուսակցական, ռազմական ու պետական աշխատանքների հմուտ կազմակերպչական գործունեության լավագույն փորձառություն հանդիսացան կուսակցական աշխատանքները Արևմտյան ռազմաճակատում, Մինսկի բոլշևիկյան կոմիտեի ղեկավարի, ՌՍԴ(բ)Կ-ի Հյուսիսարևմտյան մարզային կոմիտեի նախագահի, Մինսկի խորհրդին կից ռազմահեղափոխական Կոմիտեի նախագահի, Արևմտյան ռազմաճակատի գլխավոր հրամանատարի, Ռուսաստանի ժողովրդական բանակի առաջին ընտրովի գլխավոր հրամանատարի, երիտասարդ խորհրդային հանրապետության զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատարի, ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղարի, Բելոռուսիայի խորհրդային հանրապետության կենտգործկոմի նախագահի և ռազմական գործերի ժողկոմի, Հայաստանի խորհրդային Հանրապետության ժողկոմխորհրդի առաջին նախագահի, Անդրկովկասյան ֆեդերացիայի միութենական խորհրդի առաջին նախագահի, կուսակցության Անդրերկոմի առաջին քարտուղարի ղեկավար պաշտոնները: Ահա այն մարտական ուղին որով անցել է Ալեքսանդր Մյասնիկյանը:

Ալ. Մյասնիկյանը ոչ միայն կուսակցական, պետական ու ռազմական շնորհաշատ գործիչ էր, այլ նաև հասարակական ակտիվ գործիչ, հրապարակախոս, գրաքննադատ ու տեսաբան: 1917–1925 թթ. հիմնադրել ու խմբագրել է բոլշևիկյան «Звезда», «Молот», «Буревестник» թերթերը՝ Բելոռուսիայում, «Коммунистический труд»-ը՝ Մոսկվայում և այլն: Նա խոշոր հետք է թողել նաև հասարակական մտքի պատմության վրա. գրել է հոդվածներ Հայկական հարցի, հայոց գրերի գյուտի, հայ պոեզիայի դասականների մասին, նաև բազմաթիվ այլ հոդվածներ ու աշխատություններ, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմական ճակատագրին ու նրա մշակույթին: Խորհրդային Հայաստանի գործիչներից Մյասնիկյանն առաջինն է անդրադարձել Հայաստանի և Սփյուռքի փոխհարաբերություններին, հատուկ ուսումնասիրություն է նվիրել Սփյուռքում հայ ազգային քաղաքական կազմակերպությունների խնդիրներին: Մյասնիկյանի աշխատությունները լույս են տեսել առանձին ժողովածուով (Երկեր, 5 հատորով, 1984–1986, 2007 թթ.):

Ստանձնելով Խորհրդային Հայաստանի կառավարության ղեկը՝ Ալ. Մյասնիկյանը մեծ ջանքեր է գործադրել երկրի տնտեսությունը վերականգնելու, արևմտահայ փախստականներին հայրենադարձելու և երկրում կայունություն հաստատելու համար: Նա աշխատել է հայ մտավորականությանը Հայաստանում միավորելու և ստեղծագործական աշխատանքի համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու ուղղությամբ: 1921 թվականի հուլիսի 4–5-ը Ալ. Մյասնիկյանը մասնակցել է ՌԿ(բ)Կ կենտկոմի Կովկասյան բյուրոյի լիագումար նիստին, որտեղ քննարկվել է Լեռնային Ղարաբաղի հարցը: Դեմ է եղել Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի կազմի մեջ մտցնելու մասին որոշմանը: Նրա հետևողական ջանքերի շնորհիվ էր, որ Ադրբեջանը 1923 թ. հուլիսին Լեռնային Ղարաբաղին տվեց մարզի

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

կարգավիճակ՝ Ադրբեջանի կազմում: Անդրկովկասյան ֆեդերացիայի դաշնային խորհրդում աշխատելու տարիներին՝ 1922–1925 թթ., Մյասնիկյանը լծվում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների ժողովրդական տնտեսության ու կուլտուրական շինարարության զարգացման գործին:

Մյասնիկյանը զոհվել է 1925 թ. մարտի 22-ին Թիֆլիսի մոտակայքում տեղի ունեցած ավիավթարի ժամանակ: Թաղված է Թբիլիսիում՝ Կոմունարների այգում՝ ավիավթարի հետևանքով զոհվածների հետ: Մյասնիկյանի անունով Երևանում պողոտա և հրապարակ կա, որտեղ տեղադրված է նրա հուշարձանը: Ականավոր գործչի անունով են կոչվել Մինսկի վագոնանորոգման գործարանը (1932 թ.), որի բակում տեղադրված է նրա հուշարձանը, նաև հրապարակ և փողոց, Հայաստանի Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքը, Մարտունի գյուղը, Արմավիրի մարզի Մյասնիկյան գյուղը, Լեռնային Ղարաբաղի Մարտունի քաղաքը, Վրաստանի Մյասնիկյանի գյուղը, Ռուսաստանի Ռոստովի մարզի Մյասնիկովի շրջանը:

Ալ. Մյասնիկյանի անունով է կոչվել ՀՀ պետական հանրային գրադարանը, որտեղ պահվում է նրա անձնական գրադարանը: Նրա անհատական հավաքածուն պարունակում է 6707 միավոր գրականություն: Այն գրադարանին է փոխանցվել նրա մահից հետո՝ 1925 թ. հուլիսին:

Նախաբան

XIX դարի վերջերին և XX դարասկզբին Դոնի Ռոստովը, լինելով հարավային Ռուսաստանի արդյունաբերական ու մշակութային խոշոր կենտրոն, ապրում էր հասարակական-քաղաքական անհանգիստ կյանքով, ուր գաղափարական տարբեր ուղղություններ գտնվում էին մշտական պայքարի մեջ: Ներկայիս Դոնի Ռոստովի շրջագծի մեջ մտնող Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախը խուլ վայրում գտնվող բնակավայր չէր, և ոչ էլ խաղաղ ու անվրդով քաղքենիական աշխարհ: Այն մշտապես կրում էր Դոնի Ռոստովի խոր ազդեցությունը, նրա միջոցով հաղորդակցվում էր երկրի կարևորագույն իրադարձություններին, հեղափոխական շարժումներին, հասարակական-քաղաքական կյանքում գործող գաղափարական տարբեր ուղղությունների պայքարին: Նշված ժամանակահատվածում Նոր Նախիջևանի հայկական գաղթօջախում լայնորեն տարածված էին Ռաֆֆու, այստեղ ծնված նշանավոր գրողներ Միքայել Նալբանդյանի և Ռաֆայել Պատկանյանի հայրենասիրական, ազգային ու հեղափոխական գաղափարները, որոնք մեծ ազդեցություն էին գործում հատկապես գաղթօջախի աշակերտության ու երիտասարդության վրա: Ահա հենց այսպիսի միջավայրում են անցնում Ալ. Մյասնիկյանի մանկության և պատանեկության տարիները:

Ալ. Մյասնիկյանի մանկությունն ու պատանեկությունը

Ալեքսանդր Մյասնիկյանը (Մյասնիկով, կեղծանունը՝ Ալ. Մարտունի) ծնվել է 1886 թ. փետրվարի 9-ին (հին տոմարով՝ հունվարի 27-ին) Նոր Նախիջևան քաղաքում (ներկայումս՝ Դոնի Ռոստովի շրջագծում)՝ հայկական նահապետական բազմանդամ ընտանիքում: Նրա հայրը՝ Աստվածատուր (Ֆեոդոր) Մյասնիկյանը (Մյասնիկով), զբաղվում էր մանր առևտրով և իր ստացած չնչին վաստակով հազիվ էր կարողանում պահպանել ընտանիքի գոյությունը: Ապագա

անվանի գործիչը ընդամենը հինգ տարեկան էր, երբ վախճանվում է հայրը՝ ընտանիքը թողնելով նյութական ծանր կացության մեջ: Ուստի նա մանկությունից ճաշակում է անապահով կյանքի դառնությունները: Հետագայում՝ 1922 թ., երբ լրացնում է իր անձնական գործը, հարցաթերթիկի այն հարցին, թե ո՞ր տարիքից է ապրում իր վաստակով, պատասխանում է՝ 15 տարեկանից[1]: Ալ. Մյասնիկյանը 1894 թ. ընդունվում է Նոր Նախիջևանի Սուրբ Խաչ վանքի ծխական գիշերօթիկ դպրոցը, որտեղ հաղորդակցվում է հայոց գրական լեզվին, ծանոթանում հայ գրողների ստեղծագործություններին, որն անհրաժեշտ էր նրա ազգային դիմագիծը պահպանելու համար:

1898 թ. ավարտելով դպրոցը՝ Ալեքսանդրն ընդունվել է Նոր Նախիջևանի հայոց հոգևոր թեմական դպրոց-սեմինարիան: Այս հաստատությունն ուսուցիչներ էր պատրաստում ազգային, եկեղեցական ծխական դպրոցների համար:

Ալեքսանդրը աշխատասեր, առաջադեմ աշակերտ էր, եռանդուն, մշտապես գրքերի հետ, խոհուն: Սեմինարիան, որտեղ ուսման տևողությունը վեց տարի էր, նա ավարտեց հինգ տարում՝ 1903 թ.: Այստեղ ուսումնասիրեց հայ հին ու նոր գրականություն, հայոց պատմություն: Աբովյանը, Ռաֆֆին, Նալբանդյանն ու Պատկանյանը նրա սիրելի գրողներն էին[2]: Աբովյանի ու Պատկանյանի անեզր հայրենասիրությունը, Ռաֆֆու դեմոկրատիզմը, Նալբանդյանի հեղափոխական կիրքը մեծապես ազդում էին պատանու ազգային-ազատագրական պայքարի, հասարակական-քաղաքական հայացքների ձևավորման ընթացքի վրա:

Մյասնիկյանի կուսակցական ու հեղափոխական գործունեությունը

Ամենևին պատահական չէ, որ ազգայնական տրամադրվածություն ունեցող Մյասնիկյանն այդ տարիներին, ինչպես ինքն է նշում իր անձնական թերթիկում՝ «1903 թ. սեպտեմբերից մինչև 1904 թ. մարտը համակրել է դաշնակցությանը, նրա էսեռական արտահայտությանը»[3]: Տաճկահայության վիճակն ու Հայոց հարցը նրա մտահոգության կենտրոնում են եղել: 1904 թ. օգոստոսին Ալ. Մյասնիկյանը մեկնել է Մոսկվա և ընդունվել Լազարյան ճեմարանի 7-րդ դասարանը, որտեղ սովորելու երկու տարիներին ավելի է խորացել հայագիտության և հասարակական գիտությունների մեջ: Այդ ընթացքում Մյասնիկյանը մտել է «Սոցիալ-դեմոկրատական բանվորական հայ կազմակերպության»՝ սպեցիֆիկների կուսակցության մեջ, որը արգելք չի եղել ՌՍԴԲԿ (բոլշևիկյան թևի) հետ ևս աշխատելուն[4]: 1906 թ. ամռային արձակուրդներին Մյասնիկյանը գալիս է Նոր Նախիջևան, Ռոստովի կազմակերպության միջոցով անցնում ՌՍԴԲԿ շարքերը՝ հարելով բոլշևիկներին: Լազարյան ճեմարանում Ալ. Մյասնիկյանի դասընկերներն են եղել Վահան Տերյանը, Կարապետ Կուսիկյանը, Պողոս Մակինցյանը, Ցոլակ Խանզադյանը և ուրիշներ: Դեռևս 1902 թ. Ռոստովում Մյասնիկյանը մասնակցել է բանվորական ցույցերին ու միտինգներին, իսկ 1905 թ.՝ համառուսական գոր-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 4004, ց. 1, գ. 70, թ. 12:
[2] Դ ևրի կյ ա ն. 2006, 6:
[3] ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 70, թ. 16:
[4] Խ ա ն զ ա դ յ ա ն. 1926, 8, 9:

Պատմաբանասիրական հանդես • Историко-филологический журнал • Historical and Philological Journal • 2026 № 2

ծադուլներին և դեկտեմբերյան զինված ապստամբությանը: Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո՝ 1906 թ., ընդունվել է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որտեղ ուսանողության շրջանում շարունակել է իր ընդհատակյա հեղափոխական գործունեությունը: Նույն տարում ցարական ոստիկանության կողմից ձերբակալվել է, արտաքսվել Մոսկվայից ու մեկնել Բաքու, որտեղ մինչև 1908 թ. ծավալել է հեղափոխական գործունեություն: 1922 թ. իր անձնական գործը լրացնելիս այդ ժամանակաշրջանի մասին Մյասնիկյանը գրել է. «Մասնակցել եմ քաղաքական գործադուլներին՝ երեք անգամ, փողոցային քաղաքական ցույցերին՝ հինգ անգամ, ուսանողական շարժումներին՝ շատ, ընդհատակյա խմբակների՝ շատ, միտինգներին՝ շատ»[5]: Այդ ընթացքում նա ծանոթացել է Ստ. Շահումյանի, Բ. Կնունյանցի և հեղափոխական այլ գործիչների հետ[6]: Բաքվում Մյասնիկյանը հայերեն և ռուսերեն հանդես է եկել մի շարք դասախոսություններով՝ նվիրված ազգային ու ագրարային հարցերին[7]:

Հրապարակախոսական գործունեությունը

Նոր Նախիջևանում լույս տեսնող «Նոր կյանք» թերթի 1906 թ. օգոստոսի 20-ի համարում լույս է տեսնում Ալ. Մյասնիկյանի «Ներկա մոմենտը» խորագրով հոդվածը: Դա նրա առաջին տպագիր հոդվածն է[8]: Այնուհետև նույն թերթում լույս են տեսնում նրա քաղաքական բնույթի մի շարք հոդվածներ և թատերախոսություններ[9]:

1910 թ. Թիֆլիսում «Հորիզոն» թերթում հրատարակվում է նրա «Միքայել Նալբանդյան» ուսումնասիրությունը՝ Ալ. Մարտունի գրական կեղծանունով: Այստեղ նա բացահայտում է մեծ բանաստեղծի ու հեղափոխական-դեմոկրատի դերը հայ գրականության ու հասարակական մտքի զարգացման գործում[10]: Մ. Նալբանդյանի մասին գրած այս և այլ աշխատություններն առանձին գրքով լույս են տեսնում 1919 թ. Մոսկվայում: Այդ տարիներին Հայկական հարցը նույնպես եղել է նրա ուշադրության կենտրոնում: 1912 թ. Ալ. Մյասնիկյանը առաջիններից մեկն էր, որ ռուսական լայն հասարակությանը ներկայացրեց Հայկական հարցի էությունը: Մամուլի էջերում տպագրած իր հոդվածներով և 1913 թ. Հայկական հարցի թեմայով կարդացած դասախոսություններով Ալ. Մյասնիկյանը, քննարկելով արևմտահայության վիճակը Թուրքիայի տիրապետության տակ, ներկայացնում է արևմտյան տերությունների դիվանագիտության նպատակներն ու խարդավանքները, Հայկական հարցի վերաբերյալ հայ իրականության մեջ գործող կուսակցությունների դիրքորոշումը և նույն հարցի կապակցությամբ բոլշևիկների վերաբերմունքը[11]: Ալ. Մյասնիկյանը հետագայում ավելի խորությամբ է զբաղվում ազգային հարցերով, որոնք ժամանակի մամուլում 1913 և 1914 թթ. տպագրվելուց

---

[5] ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 70, թ. 21, 22:

[6] Կ ա ր ի ն յ ա ն, Ս ի մ ո ն յ ա ն. 1925, 8, 9, 10, 14:

[7] «Մարտակոչ» (Թիֆլիս), 25. III. 1925:

[8] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 25–27:

[9] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 27–40:

[10] Ո ս կ ե ր չ յ ա ն. 1974, 55–61:

[11] Ա վ ա գ յ ա ն. 1964, 6, 15, 16:

հետո առանձին գրքերով «Ազգային հարցի առթիվ» ընդհանուր վերտառությամբ 1919 թ. լույս են տեսնում Մոսկվայում[12]: Բաքվի «Նոր կյանք» շաբաթաթերթի 1911 և 1912 թթ. տարբեր համարներում տպագրված մի շարք հոդվածներում Ալ. Մյասնիկյանը պարզաբանում է դասակարգային շահերի ու շարժումների էությունը, բացատրում ժամանակի հասարակական-քաղաքական ու տնտեսական կյանքի դրսևորումները[13]: Գործչի անսահման հայրենասիրության դրսևորումը հայ ժողովրդի պատմական ճակատագրի ու նրա մշակույթի հանդեպ երևում է 1913 թ. հայ գրերի գյուտի 1500 և հայկական տպագրության սկզբնավորման 400-ամյակների առթիվ «Մշակ» թերթի նոյեմբերի 26-ի համարում տպագրված «Երկու կուլտուրական տոն» հոդվածում, որտեղ հայ մտավորականությանը և մյուս ուժերին հասարակական գործունեության կոչ է անում՝ ժողովրդին խավարից դուրս բերելու համար[14]:

Ալ. Մյասնիկյանի ռազմական, կուսակցական և պետական գործունեությունը

1911 թ. Ալ. Մյասնիկյանը գերազանցությամբ ավարտում է Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի տնտեսագիտության բաժինը, որից հետո զորակոչվում է բանակ և ծառայությունն անցկացնում Մոսկվայի կայազորի զորանոցներից մեկում, որտեղ ձեռք է բերում ռազմական հմտություններ ու գիտելիքներ: 1912 թ. սեպտեմբերին զորացրվելով բանակից՝ Մյասնիկյանն իրավաբանի մասնագիտությամբ աշխատանքի է անցնում Մոսկվայում՝ իբրև երդվյալ հավատարմատարի օգնական:

1914 թ. համաշխարհային պատերազմի նախօրյակին՝ հուլիսին, Ալ. Մյասնիկյանը կրկին զորակոչվում է բանակ՝ կրտսեր սպայի զինվորական կոչումով, և նշանակվում Մոսկվայում տեղակայված պահեստային գումարտակներից մեկի վաշտի հրամանատար: 1915 թ. հունվարին նա նշանակվում է կրտսեր հրամանատարական կազմի ուսումնավարժական դպրոցի պետ: Դա Մյասնիկյանին հնարավորություն է տալիս է՛լ ավելի խորանալու ռազմական գործի մեջ, ընդլայնելու իր շփումները հեղափոխականորեն տրամադրված զինվորականների հետ[15]:

Շուտով Մյասնիկյանին ուղարկում են ռազմաճակատ, և նա ակտիվորեն մասնակցում է ռազմական գործողություններին: Որպես խիզախ հրամանատար 1915 թ. պարգևատրվում է Սուրբ Ստանիսլավի երրորդ աստիճանի, 1916 թ.՝ Սուրբ Աննայի երրորդ աստիճանի և Սուրբ Ստանիսլավի երրորդ աստիճանի շքանշաններով[16]: Բայց դա չի խանգարում, որ քաջարի հրամանատարը զինվորների մեջ հեղափոխական աշխատանք տանի: Մյասնիկյանը փայլուն է կատարում զինվորների հեղափոխականացման ուղղությամբ իրենց գնդի կուսակցական կազմակերպության որոշումները[17]:

[12] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1955, 37:
[13] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 40–55, 94–124:
[14] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 228, 289:
[15] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1955, 42:
[16] ՀԱԱ, ֆ. 4004, ց. 1, գ. 113, թ. 11:
[17] Դ ա լ լ ա ք յ ա ն. 1976, 19, 20:

1917 թ. փետրվարյան հեղափոխության և ցարի տապալման լուրը Ալ. Մյասնիկյանին հասնում է Արևմտյան ռազմաճակատում: Խոր գիտելիքներ ունեցող անձնվեր հեղափոխական գործիչը, հեղափոխության մեջ ներգրավվելով, շատ շուտով դառնում է համառուսաստանյան մասշտաբի քաղաքական ու զինվորական խոշոր գործիչ: Ապրիլի 6-ին Մինսկում բացվում է Արևմտյան ռազմաճակատի բանակների ներկայացուցիչների համագումարը, որին մասնակցելու համար երաշխավորվում է Մյասնիկյանը[18]: Համագումարն ընտրում է ռազմաճակատային զինվորական կոմիտե և նախագահություն: Ալ. Մյասնիկյանն ու Մ. Ֆրունզեն ընդգրկվում են նախագահության կազմում: Նրանց նախաձեռնությամբ Մինսկում հիմնադրվում է բոլշևիկյան «Զվեզդա» թերթը, որի առաջին համարը լույս է տեսնում հուլիսի 27-ին[19]: Այդ օրերին էլ Ալ. Մյասնիկյանը Արևմտյան ռազմաճակատի ու մարզի բոլշևիկների կողմից ընտրվում է ՌՍԴԲԿ VI համագումարի պատգամավոր: Համագումարում նա հանդես է գալիս ռազմաճակատի վիճակի և Մինսկի բոլշևիկյան կազմակերպության գործունեության մասին զեկուցումով՝ պաշտպանելով հեղափոխության հաղթանակի մասին լենինյան թեզիսները[20]: Սեպտեմբերին տեղի է ունենում Հյուսիսարևմտյան մարզի (Բելոռուսիայի) և Արևմտյան ռազմաճակատի բոլշևիկների առաջին կոնֆերանսը, որտեղ ձևավորվում է ՌՍԴԲԿ Հյուսիսարևմտյան մարզային կազմակերպությունը, որն ընտրում է կոմիտե՝ Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ[21]:

Հոկտեմբերյան հեղափոխության օրերին Ալ. Մյասնիկյանը գտնվում էր Մինսկում: Հոկտեմբերի 26-ին, լսելով Պետրոգրադում զինված ապստամբության հաղթանակի լուրը, անմիջապես հրավիրում է Մինսկի խորհրդի նիստ, որը քաղաքում հռչակում է խորհրդային իշխանություն: Նիստում ընտրվում է Հյուսիսարևմտյան մարզի և Արևմտյան ռազմաճակատի ռազմահեղափոխական կոմիտե, որի ղեկավարը դառնում է Ալ. Մյասնիկյանը[22]:

1917 թ. նոյեմբերի 4-ին Ալ. Մյասնիկյանը փայլուն իրականացնում է բանակի՝ Մոգիլյովում կենտրոնացած հակահեղափոխական հրամանատարության «վերսալյան որջի» ոչնչացումը[23]: Նոյեմբերի 20-ին Մինսկում բացվում է Արևմտյան ռազմաճակատի զինվորների II համագումարը, որը լուծարված է համարում ցարական բանակի հրամանատարական կազմը և Կենտկոմի առաջարկով Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար է ընտրում Ալ. Մյասնիկյանին[24]:

Հենց այդ օրերին պաշտոնանկ է արվում ռուսական հին բանակի Գերագույն գլխավոր հրամանատար գեներալ Նիկոլայ Դուխոնինը, որի զորակայանը գտնվում էր Մոգիլև քաղաքում. Գերագույն գլխավոր հրամանատար է նշանակվում ենթասպա Ն. Կռիլենկոն, տեղակալ՝ Ալ. Մյասնիկյանը: Շուտով Ն. Կռիլենկոն

---

[18] ՀԱԱ, ֆ. 4004. ց. 1, գ. 113, թ. 41:

[19] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 299:

[20] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 1, 295:

[21] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1955, 70:

[22] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 2, 15–25, 33–43:

[23] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1955, 88, 89:

[24] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 2, 15–25, 33–43:

կանչվում է Պետրոգրադ և Գերագույն գլխավոր հրամանատարի պարտականությունները 1917 թ. դեկտեմբերից դրվում են Ալ. Մյասնիկյանի վրա[25]:

Փաստորեն Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո ՌՍԴԲ(բ)Կ Կենտկոմը և խորհրդային կառավարությունը Ալ. Մյասնիկյանին միաժամանակ վստահում են բարձր ու պատասխանատու չորս պաշտոն. Հյուսիսարևմտյան մարզի ռազմահեղափոխական և ՌՍԴԲ(բ)Կ Հյուսիսարևմտյան ռազմաճակատի մարզային կոմիտեների նախագահ, Արևմտյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատար և Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ, ապա՝ Գերագույն գլխավոր հրամանատարի պաշտոնակատար[26]: Այդ բոլոր ոլորտներում Մյասնիկյանը հանդես է բերում տաղանդավոր կազմակերպչի, պետական ու կուսակցական հմուտ ղեկավարի, ռազմաքաղաքական ստրատեգի փայլուն կարողություններ: Ս. Կիրովը Մյասնիկյանին անվանել է «Հեղափոխությունից ծնված գեներալ»[27]:

1918 թ. գարնանը, երբ Արևելքում բորբոքվել էր պայքարը սպիտակ գեներալների և չեխ խռովարարների դեմ, Ալ. Մյասնիկյանն ուղարկվում է Վոլգայի շրջան՝ որպես Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար[28]: Հաջողությամբ լուծելով իր առջև դրված խնդիրները և Պովոլժիեում հաստատելով խաղաղություն՝ նա վերադառնում է Բելոռուսիա: 1918 թ. դեկտեմբեի 30-31-ին Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ տեղի է ունենում ՌԿ(բ)Կ Հյուսիսարևմտյան մարզային VI կոնֆերանսը, որն այնուհետև հայտարարվում է Բելոռուսիայի կոմկուսի առաջին համագումար: Այն ընտրում է կենտրոնական բյուրո՝ Ալ. Մյասնիկյանի գլխավորությամբ[29]: Հաջորդ օրը՝ 1919 թ. հունվարի 1-ին, Բելոռուսիան հռչակվում է Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն: Ալ. Մյասնիկյանն ստանձնում է այդ հանրապետության Կենտգործկոմի նախագահի և ռազմական գործերի ժողկոմի պաշտոնները: Ընտրվելով այդ կարևոր պաշտոններում՝ նա իր բոլոր ուժերը նվիրաբերում է բելոռուս ժողովրդի ինքնուրույն պետականության ստեղծման ու ամրապնդման գործին: Հետագայում ԲԿԿ Կենտկոմը նշում է. «Ընկեր Մյասնիկյանի անունը, որպես Բելոռուսիայի կոմկուսի հիմնադրի և որպես Խորհրդային Բելոռուսիայի կառուցողներից մեկի ընդմիշտ կմնա Բելոռուս աշխատավորների հիշողության մեջ»[30]:

1919 թ. գարնանը ՌԿ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Ալ. Մյասնիկյանը Բելոռուսիայից տեղափոխվում է Մոսկվա, որտեղ սկզբում աշխատում է որպես ՌԿ(բ)Կ Մոսկվայի կոմիտեի ռազմական կազմակերպիչ և մայրաքաղաքի պաշտպանության օպերատիվ շտաբի պետ, ապա սեպտեմբերին ընտրվում է ՌԿ(բ)Կ Մոսկվայի քաղաքային ու նահանգային կոմիտեների առաջին քարտուղար[31]: Այդ ընթացքում նա հսկայական աշխատանք է կատարում մայրաքաղաքի կոմունիստների

[25] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1984, հ. 2, 344, 345:
[26] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1947, 82, 83, 84, 85:
[27] Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն. 1976, 37:
[28] Ղ ա ր ի բ ջ ա ն յ ա ն. 1976, 35, 36:
[29] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1985, հ. 3, 17–39, 42–143, 145–150, 178–180, 464–465:
[30] «Заря Востока» (Тбилиси), 25. III. 1925.
[31] Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. 1947, 94, 95:

և աշխատավորների ուժերը համախմբելու ու քայքայված տնտեսությունը վերականգնելու ուղղությամբ: Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ մայրաքաղաքում կազմակերպվում են առաջին շաբաթօրյակները, հիմնադրվում է «Коммунистический труд» թերթը և այլն: Սակայն ռազմաքաղաքական իրադրությունը նորաստեղծ Խորհրդային Ռուսաստանում մնում էր լարված: Այս պայմաններում Ալ. Մյասնիկյանը կարողանում է հետևել մայրաքաղաքի կարգուկանոնին, հաստատում է ամուր կարգապահություն, լծվում է խորհրդային բանակաշինության գործին, որում, իրոք, մեծ են նրա ծառայությունները: Եվ պատահական չէ, որ նա, կուսակցական ու պետական ականավոր գործիչ լինելուց բացի, վաստակել է նաև ռազմական գործչի ու խոշոր զորահրամանատարի անուն, արժանացել համաժողովրդական սիրո ու համակրանքի:

Ալ. Մյասնիկյանի՝ այդ տարիների գործունեության մասին հետագայում Ս. Մ. Կիրովը գրել է. «Երբ այս կամ այն ռազմաճակատում ուժեղանում էր ռազմական վտանգը, կուսակցությունը և հեղափոխական իշխանությունը նրան երկրի մի ծայրից փոխադրում էին մյուս ծայրը: Եվ ամենուրեք ու ամեն տեղ Մյասնիկյանը պատվով է կատարում հեղափոխականի իր պարտականությունները ... Երբ անհրաժեշտություն էր ծագում աշխատանքի ղեկն ուղղել դեպի խորհրդային շինարարությունը, Ալյոշան այստեղ ևս առաջին շարքերում էր կանգնում: Երբ անհրաժեշտ էր լինում ուժեղացնել կուսակցական աշխատանքը խորհրդային պետության մեջ, մենք Մյասնիկյանին տեսնում էինք այնպիսի պատասխանատու աշխատանքի պոստում, ինչպես Մոսկվայի կոմիտեի քարտուղարի, իսկ իր կյանքի վերջին տարիներին՝ մեր կուսակցության Անդրկովկասյան երկրային կոմիտեի քարտուղար»[32]:

Ալ. Մյասնիկյանը Հայաստանում և Անդրկովկասում

Երբ Հայաստանում հաստատվում են խորհրդային կարգեր, Հայաստանի կոմկուսը 1920 թ. դեկտեմբերի սկզբին խնդրանքով դիմում է ՌԿ(բ)Կ կենտկոմին, որպեսզի վերջինս Ալ. Մյասնիկյանին գործուղի Հայաստան՝ պատասխանատու աշխատանքի: Նա Հայաստան է գործուղվում ավելի ուշ՝ 1921 թ. ապրիլի 21-ին՝ նույն օրը ևեթ ընդգրկվելով ՌԿ(բ)Կ Կովկասյան բյուրոյի կազմում: Ապրիլի 13-ին՝ Մոսկվայից մեկնելուց առաջ, նա տեսակցություն է ունենում Վ. Լենինի հետ, որի ընթացքում մանրամասն զրուցում են Կովկասում տարվելիք աշխատանքների մասին: Այդ առթիվ հետագայում Ալ. Մյասնիկյանը գրում է. «Միանգամից պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու, և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել դրանով իրենց ամենօրյա աշխատանքում»[33]: Լենինը կատարում է Մյասնիկյանի խնդրանքը, որի արդյունքում ծնվում է «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին» ուղղ-

[32] «Бакинский рабочий» (Баку), 25. III. 1925.

[33] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 2007, հ. 5, 305:

ված հայտնի նամակը: Ալ. Մյասնիկյանին տրվում է նաև Լենինի ստորագրությամբ մանդատ, որտեղ նշված էր նրան Կովկաս ուղարկելու նպատակը և տեղական կուսակցական ու խորհրդային բոլոր մարմիններին առաջարկված էր վերջինիս ցույց տալ ամեն տեսակի աջակցություն: Ալ. Մյասնիկյանը Մոսկվայից իր հետ բերում է 20 վագոն հացահատիկ և այլ պարագաներ, որ Ռուսաստանի կառավարությունն ուղարկել էր սովի ճիրաններում հայտնված հայ աշխատավորությանը:

1921 թ. մայիսի 4-ին ժամանելով Երևան՝ Ալ. Մյասնիկյանն անմիջապես անցնում է Հայաստանի հեղկոմի նախագահի պարտականությունների կատարմանը: Մայիսի 9-ին հրավիրվում է Երևանի կուսակցական կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ ժողով, որտեղ հանրապետության նոր ղեկավարը հանդես է գալիս իր առաջին ծրագրային ելույթով: Այս ելույթում նա դատապարտում է աշխատավոր գյուղացիության և մտավորականության նկատմամբ Հայաստանում խորհրդային իշխանության առաջին ամիսներին թույլ տրված սխալները, պահանջում նրանց հանդեպ վարել մեղմ քաղաքականություն, ինչ-որ չափով զիջումներ անել[34]:

1921 թ. մայիսի 21-ին Հայաստանի հեղկոմը վերակազմվում է Ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահ և միաժամանակ ռազմական գործերի ժողկոմ է հաստատվում Ալ. Մյասնիկյանը[35]: Նորաստեղծ կառավարությունը և նրա նախագահը հսկայական ջանքեր են գործադրում լուծելու մեկը մյուսից հրատապ, կենսական, բարդ խնդիրները: Շտապ միջոցներ էին ձեռք առնվում ժողովրդին սովի ճիրաններից փրկելու, տասնյակ հազարավոր արևմտահայ գաղթականներին տեղավորելու, որբ ու անապաստան երեխաներին կերակրելու ու հագցնելու ուղղությամբ, աստիճանաբար սկսում է կարգավորվել կազմալուծված հասարակական կյանքը, հաղթահարվում են համաճարակները, դանդաղ վերականգնվում է ծայր աստիճանի քայքայված տնտեսությունը: Անհետաձգելի միջոցներ են ձեռնարկվում հանրապետության միջազգային դրությունն ամրապնդելու ուղղությամբ: Իրականացվում են հողաբաշխման ու հողաշինարարության դժվարին աշխատանքներ: «Այս երկիրը, մերն է, – ասում է Մյասնիկյանը, – և չնայած, որ գտնվում է դժնդակ պայմաններում, բայց նա դուրս կգա այդ դրությունից՝ ոչ կարեկցություն հայցելով, այլ աշխատավորության հուժկու բազուկներով: Դրությունը, այո՛, ծանր է, բայց երկիրը, պետք է հանել այդ վիճակից, անհրաժեշտ է «վայրենացած ժողովրդին» վերադարձնել կուլտուրական կյանքի»[36]:

Ալ. Մյասնիկյանի փորձառու ղեկավարությամբ Հայաստանի նորաստեղծ խորհրդային կառավարությունը և կոմկուսը մեծ ջանքեր են գործադրում ու նվազագույն կորուստների գնով կարողանում Լեռնահայաստանում ևս հաստատել խորհրդային կարգեր: Ալ. Մյասնիկյանի ղեկավարությամբ Խորհրդային Հայաստանը կարճ ժամկետում հասնում է զգալի նվաճումների: Առաջին հերթին նա ձեռնամուխ է լինում երկրի քաղաքական կյանքի կարգավորմանը: «Մենք եկել

[34] «Կոմունիստ» (Բաքու), 10. V. 1921:

[35] «Կոմունիստ», 25. V. 1921:

[36] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1957, 400:

ենք այստեղ ո՛չ թե քաղաքացիական կռիվ անելու, չարչարելու, այլ աշխատավորությանը տանելու դեպի խաղաղ, հանգիստ աշխատանք»[37], – հայտարարում է նա:

Նրա նախաձեռնությամբ Ռուսաստանից ու մյուս հանրապետություններից հայթայթվում և Հայաստան են հասցվում սննդամթերքի ու նյութական օգնության առաջին բեռները: Երկրում մոլեգնող համաճարակն ու սովը տեղի են տալիս, կյանքն սկսում է աշխուժանալ, կազմակերպվում են շաբաթօրյակներ, հիմնադրվում կոոպերատիվ տնտեսություններ, Հովի. Թումանյանի ղեկավարությամբ ստեղծվում է Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որն ամրացնում է կապը Սփյուռքի հետ, լուրջ ուշադրություն է դարձվում գյուղի հոգսերին ու կարիքներին: Ամենուր ամրապնդվում է աշխատանքային կարգապահությունը, բարելավվում պետական հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը. երկիրն ընկնում է հունի մեջ, ժողովուրդը սկսում է հավատալ իր առաջնորդին ու գնալ նրա հետևից:

Հատկանշական է, որ նրա ստորագրությամբ հրապարակված առաջին փաստաթղթերից են եղել Երևանը մաքրելու, բարեկարգելու և օրինակելի մայրաքաղաք դարձնելու, անգրագիտությունը վերացնելու մասին դեկրետները: ՀԽՍՀ Ժողկոմխորհրդի 1921 թ. սեպտեմբերի 27-ի նիստում որոշում է ընդունվում նաև թոշակներ նշանակել ու պարեն հատկացնել գրականության և արվեստի 18 նշանավոր գործիչների, այդ թվում՝ գրողներ Հովի. Հովհաննիսյանին, Հովի. Թումանյանին, Ալ. Շիրվանզադեին, Դ. Դեմիրճյանին, Հ. Հակոբյանին, Նար-Դոսին, դերասաններ Գ. Տեր-Դավթյանին, Հ. Աբելյանին, Սիրանույշին, Հ. Զարիֆյանին, նկարիչներ Գ. Բաշինջաղյանին, Ե. Թադևոսյանին, Մ. Սարյանին և այլոց[38]: Դրանից մեկ ամիս չանցած դարձյալ Ալ. Մյասնիկյանի նախաձեռնությամբ ՀԽՍՀ կառավարությունն ընդունում է նոր որոշում՝ Լուսավորության ժողկոմատին կից գրական-գեղարվեստական ֆոնդ ստեղծելու, գրական մրցանակաբաշխություններ անցկացնելու, գեղարվեստի աշխատողների տուն հիմնելու, գրահրատարակչական գործը կարգավորելու և այլ միջոցառումների մասին:

Ալ. Մյասնիկյանը դիմում է աշխարհի տարբեր երկրներում ապրող հայ մտավորականությանը՝ վերադառնալ հայրենիք և նվիրվել նրա շենացման աշխատանքներին: Շատերն արձագանքում են մեծ հայրենասերի կոչին ու գալիս Հայաստան: Նրանց մեջ էին նկարիչ Մարտիրոս Սարյանը, ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանը, լեզվաբան Հրաչյա Աճառյանը և այլք: 1921–1922 թթ. աշխարհի տարբեր քաղաքներից Երևան են տեղափոխվում ազգային մշակույթի շատ գանձեր, գրքեր ու անձնական հավաքածուներ, հիմնադրվում են բազմաթիվ գրադարաններ, թանգարաններ ու պատկերասրահներ, Երևանում բացվում է առաջին պետական թատրոնը, կազմակերպվում են գեղարվեստական ցուցահանդեսներ:

Լայնորեն հայտնի իրողություն է Ալ. Մյասնիկյանի հոգատարությունը կարիքավոր մարդկանց նկատմամբ: Այս առումով հատկապես նշելի է նրա վերաբեր-

---

[37] Մ յ ա ս ն ի կ յ ա ն. 1957, 335, 336:

[38] «Խորհրդային Հայաստան», 26. X. 1921:

մունքը ապագա աշխարհահռչակ գիտնական Վիկտոր Համբարձումյանի հանդեպ[39]: 1921 թ. հոկտեմբերի 10-ի նիստում կառավարությունը որոշեց փոքրիկ աստղագետ Վիկտոր Համբարձումյանին միանվագ հատկացնել 3–5 միլիոն ռուբլի (Ռուսաստանի Խորհրդային դրամանիշներով)՝ նպաստ Լենինգրադում ուսանելու համար: Նման օրինակները շատ են՝ կապված Ալ. Մյասնիկյանի պաշտոնավարության հետ՝ թե՛ Հայաստանում և թե՛ Անդրերկրկոմում աշխատելու շրջանում:

1922 թ. հունվարի 26–29-ը Երևանում տեղի է ունենում Հայաստանի կոմկուսի առաջին համագումարը, որը մեծ իրադարձություն էր հանրապետության կուսակցական կազմակերպությունների կյանքում: Համագումարում Ալ. Մյասնիկյանը հանդես է գալիս ՌԿ(բ)Կ համառուսաստանյան 11-րդ կոնֆերանսի արդյունքների և Հայաստանում խորհրդային շինարարության ընթացքի մասին զեկուցումներով:

Հայաստանի կոմկուսի առաջին համագումարի ավարտից մեկ օր հետո՝ հունվարի 30-ին, բացվում է խորհուրդների համահայաստանյան առաջին համագումարը, որտեղ հանրապետության ութամսյա գործունեության մասին հաշվետվությամբ հանդես է գալիս Ալ. Մյասնիկյանը: Նրա զեկուցման մեջ տրված էր Հայաստանի տնտեսական ու քաղաքական իրավիճակի ճիշտ պատկերը, նշված էին հերթական խնդիրները և դրանց լուծման հնարավորություններն ու միջոցները, բացահայտված էին հետագա զարգացման հեռանկարները:

Հայաստանում աշխատելու կարճ ժամանակամիջոցում Ալ. Մյասնիկյանն իր մեծ հմայքով դառնում է աշխատավոր զանգվածների սիրելի առաջնորդը, նրանց շահերի հարազատ արտահայտիչն ու իղձերի թարգմանը, սրտակից ու հարազատ բարեկամը:

1922 թ. մարտի 12-ին Ալ. Մյասնիկյանը փոխադրվում է Թիֆլիս, գտնվում է ձևավորվող Անդրֆեդերացիայի ղեկի մոտ՝ հենց սկզբից զբաղեցնելով ֆեդերատիվ պետության դաշնակցային խորհրդի նախագահի, իսկ հետո՝ ՌԿ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի առաջին քարտուղարի պաշտոնները: Նրա անմիջական ղեկավարությամբ են լուծվում ֆեդերացիայի կյանքի գրեթե բոլոր կարևորագույն հարցերը: Այդ պաշտոններում Մյասնիկյանը կատարում է գործնական-կազմակերպական և գաղափարական-քաղաքական վիթխարի աշխատանք՝ Անդրկովկասում ազգամիջյան խաղաղության հաստատման, Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի խորհրդային հանրապետությունների տնտեսական ամրապնդման, ԽՍՀՄ-ի ստեղծման նպատակով երկրամասի ժողովրդական մասսաների ծավալած լայն շարժումը ղեկավարելու ուղղությամբ: Նրա հմուտ ղեկավարությամբ Անդրկովկասի կուսակցական կազմակերպությունը խոշոր հաջողություններ ձեռք բերեց տնտեսության և լուսավորության բնագավառներում, հասարակական-քաղաքական կյանքի բոլոր ոլորտներում:

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրֆեդերացիայում աշխատելու տարիներին Ալ. Մյասնիկյանն անդադրում զբաղվում է գրական-ստեղծագործական աշխատանքով, իր հոդվածներով, գրախոսություններով, բանավոր ելույթներով,

[39] Ա մ ի ր յ ա ն. 1986, 517–518:

զրույցներով, դիտողություններով ու խորհուրդներով ուղղություն տալիս երկրամասի գրական-հասարակական կյանքին:

Գտնվելով Անդրկովկասում՝ Ալ. Մյասնիկյանը մնում էր համամիութենական մասշտաբի կուսակցական և պետական խոշոր գործիչ: Նա երկրի Ռազմահեղափոխական խորհրդի անդամ էր, ԽՍՀՄ ԿԳԿ-ի նախագահության անդամ: Համակուսակցական մի շարք համագումարների պատվիրակը նաև ՌԿ(բ)Կ Կենտկոմի անդամության թեկնածու էր:

1925 թ. մարտի 22-ին անսպասելիորեն կտրվում է հայ ժողովրդի հարազատ զավակի՝ Ալ. Մյասնիկյանի կյանքի թելը: Այդ օրը նա պետք է մեկներ Սուխում՝ մասնակցելու Աբխազական ԻԽՍՀ խորհուրդների համագումարին: Անդրկովկասյան պետքաղվարչության նախագահ Ս. Մոգիլևսկու և Փոստ-հեռագրական ժողկոմատի անդրկովկասյան վարչության պետ, ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի վերահսկիչ հանձնաժողովի նախագահի տեղակալ Գ. Աթարբեկյանի ու երկու օդաչուների հետ «Յունկերս» ինքնաթիռով ժամը 11.50-ին Թիֆլիսի օդանավակայանից օդ բարձրանալով՝ ուղղություն է վերցնում դեպի Սուխում: Սակայն հենց օդանավակայանի շրջակայքում ժամը 12.10-ին ինքնաթիռը բոցավառվում է ու ենթարկվում աղետի. բոլոր ուղևորները տեղում զոհվում են:

Հայ ժողովրդի նվիրյալ զավակի ողբերգական մահվան բոթն իսկույն տարածվում է ողջ երկրով մեկ ու նրա սահմաններից դուրս. Անդրկովկասում մարտի 22–25-ը հայտարարվում են սգո օրեր, մամուլում օրեր շարունակ տպագրվում են ցավակցական բազմաթիվ հեռագրեր, գնահատանքի խոսքեր, հուշեր ու այլ նյութեր ԽՍՀՄ և Անդրկովկասյան Դաշնության ղեկավարների, մտավորականների, բանվորների ու գյուղացիների, հեղափոխական ու պետական ականավոր գործիչների կողմից, բոլորը սգում են Մյասնիկյանի ողբերգական մահը: ՌԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Պրավդա» թերթն իր առաջնորդողում նշում է, որ Ալ. Մյասնիկյանի և մյուսների կորուստը Ստ. Շահումյանի ու Բաքվի 26 կոմիսարների սպանությունից հետո երկրորդ ուժգին հարվածն էր կուսակցությանն ու խորհրդային պետությանը[40]:

Մարտի 25-ին Թիֆլիսում տեղի է ունենում Ալ. Մյասնիկյանի և նրա հետ զոհված ընկերների աճյունների հուղարկավորությունը: Այդ օրը բազմամարդ սգո միտինգներ են տեղի ունենում Մոսկվայում, Մինսկում, Դոնի Ռոստովում, Անդրկովկասի բոլոր քաղաքներում: Նույն օրվա մամուլն ամբողջությամբ նվիրվում է զոհվածների հիշատակին: «Խորհրդային Հայաստան» թերթի մարտի 25-ի համարում տպագրվում է ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Աշոտ Հովհաննիսյանի՝ Երևանի քաղխորհրդի սգո նիստում արտասանած ճառը, որի մեջ նա համակողմանիորեն վերհանում է Ալ. Մյասնիկյանի վիթխարի դերը՝ հեղափոխության հաղթանակի կոփման ու ԽՍՀՄ ստեղծման գործում՝ մասնավորապես նշելով, որ «դարագլուխ անձնավորող քաղաքական ու պետական գործիչների շարքում պիտի հիշվի Ալ. Մյասնիկյանի պայծառ անունը»[41]:

Ավ. Իսահակյանը 1925 թ. ապրիլի 22-ին Վենետիկից Մ. Սարյանին ուղարկած նամակում, նկարագրելով ողջ սփյուռքահայության ապրած վիշտը, գրում է.

---

[40] «Правда» (Москва), 26. III. 1925.

[41] Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն. 1969, 29–42:

«Վերջապես այսօր գրում եմ քեզ. Երևանը ծաղկել է հիմա, գուցե կեռասը հասել է, Արարատյան դաշտը կանաչին է տալիս, լեռներից իջնում են գարնան հորդ ջրերը, և Ալեքսանդր Մյասնիկյանը չկա: Նա չկա այլևս, ամենալավ հայերից մեկը, ամենախելացի ու ամենաբարի բոլշևիկը:

Ամենաանկեղծ զգացումով ցավում եմ նրա կորուստը, նա ամեն հայի սրտի մեջ էր ապրում, և ամենքը ողբում են նրան: Հայության պաշտպանն էր նա ներկա դառն ժամանակներում ... ո՞վ պիտի փոխարինի նրան, դա է նույնպես շատ մտածել տալիս ինձ ... Ափսոս, անհուն ափսոս, ի՜նչ կարճ կյանք ունեցավ և ի՜նչ մեծ գործ կատարեց»[42]:

Եզրակացություն

Ալ. Մյասնիկյանը պատմական բացառիկ երևույթ էր: Նրա կերպարը եղել է ոգեշնչման աղբյուր, որի արդյունքն է Երևանի կենտրոնում վեր խոյացող նրա գրանիտե մոնումենտալ հուշարձանը (քանդակագործ՝ Ա. Շիրազ, ճարտարապետ՝ Ջ. Թորոսյան, 1981 թ.), որը երախտագետ ժողովրդի հարգանքի ու սիրո տուրքն է իր փառապանծ զավակի հիշատակին:

Մյասնիկյանի գործունեության լավագույն գնահատականը տվել է Մեծն Չարենցը.

Նաիրյան արև՜ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած,
Կործանվող մեր երկրի համար դու եղար փրկության առագաստ: –
Դու փվիր ընթացք և ուղի մեզ մինչև դարերն հեռակա,
Նաիրյան արև՜ն էր քո մեջ՝ լենինյան հրով ճառագած[43]*:*

Չարենցյան այս գնահատականն ու մեծ հայորդու գործունեության պատմական դասերի յուրացումը արդիական են նաև մեր ժամանակներում:

Էդիկ Մինասյան – պ. գ. դ., պրոֆ., ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրությունները՝ Հայաստանի նորագույն պատմության հիմնահարցերի ուսումնասիրություն, Խորհրդային Հայաստանի և Երրորդ հանրապետության պատմություն, հայ կանանց հերոսապայքարի պատմություն: Հեղինակ է 12, համահեղինակ՝ 8 մենագրությունների և 300 հոդվածի:
ORCID: 0000-0003-3206-6103. eminasyan@ysu.am

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ամիրյան Ս. 1986, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, «Հայաստան» հրատ., 640 էջ [Amiryan S. 1986, Alexander Myasnikyan. Yerevan, “Hayastan” Publishing House, 640 p. (in Armenian)]:

[42] Ի ս ա հ ա կ յ ա ն. 1979, 206:
[43] Չ ա ր ե ն ց. 1987, 220:

Ավագյան Ս. 1964, Ալեքսանդր Մյասնիկյանը հրապարակախոս (համառոտ ակնարկ), Երևան, «Միտք» հրատ., 98 էջ [Avagyan S. 1964, Alexander Myasnikyan as a Publicist (a brief essay). Yerevan, "Mitk" Publishing House, 98 p. (in Armenian)]:

Դալլաքյան Կ. 1976, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան, «Սիմ տպագրատուն» ՍՊ, 80 էջ [Dallakyan K. 1976, Alexander Myasnikyan. Yerevan, "Sim Printing House" LLC, 80 p. (in Armenian)]:

Դևրիկյան Տ. 2006, Երևան, ՀՀ պաշտպանության նախարարության տեղեկատվական վարչություն, «Սիմ» տպարան ՍՊԸ, 80 էջ [Devrikyan T. 2006. Yerevan, Information Department of the Ministry of Defense of the Republic of Armenia, "Sim Printing House" LLC, 80 p.] (in Armenian)]:

Իսահակյան Ավ. 1979, Երկերի ժողովածու վեց հատորով, հ. 6, Երևան, «Սովետական գրող» հրատ., 432 էջ [Isahakyan Av. 1979, Collected works in six volumes, V. 6. Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House, 432 p. (in Armenian)]:

Խանզադյան Ց. 1926, Ալեքսանդր Մյասնիկյան (բնութագրման փորձ), Երևան, ՀԽՍՀ պետհրատ, 39 էջ [Khanzadyan Ts. 1926, Alexander Myasnikyan (An Attempt to Characterize). Yerevan, State Publishing House of the Armenian SSR, 39 p. (in Armenian)]:

«Խորհրդային Հայաստան» (Երևան), 26. X. 1921 ["Khorhrdayin Hayastan" (Yerevan), 26. X. 1921 (in Armenian)]:

Կարինյան Ա., Սիմոնյան Դ. 1925, Ալ. Մարտունի Մյասնիկյան (նյութեր կենսագրության համար), Մոսկվա, ՀՍԽՀ Պետական հրատարակչություն, 80 էջ [Karinyan A., Simonyan D. 1925, Al. Martuni Myasnikyan (Materials for biography). Moscow, State Publishing House of the Armenian SSR, 80 p. (in Armenian)]:

«Կոմունիստ» (Բաքու), 10, 25. V. 1921 ["Komunist" (Baku), 10, 25. V. 1921 (in Armenian)]:

Հայաստանի Ազգային արխիվ. ֆ. 4004, g. 1, գ. 70, թ. 12, 16, 21, 22, գ. 113, թ. 11, 41 [National Archives of Armenia, f. 4004, inv. 1, file 70, p. 12, 16, 21, 22; file 113, p. 11, 41 (in Armenian)]:

Հովհաննիսյան Ա. 1969, Հուշեր և բնութագրումներ, Երևան, «Հայաստան» հրատ., 130 էջ [Hovhannisyan A., 1969, Memoirs and Characterizations. Yerevan, "Hayastan" Publishing House. 130 p. (in Armenian)]:

Ղարիբջանյան Գ. 1976, Ալեքսանդր Մյասնիկյան, Երևան «Հայաստան» հրատ., 103 էջ [Gharibjanyan G. 1976, Alexander Myasnikyan. Yerevan, "Hayastan" Publishing House, 103 p. (in Armenian)]:

«Մարտակոչ» (Թիֆլիս), 25. III. 1925 ["Martakoch" (Tiflis), 25. III. 1925 (in Armenian)]:

Մյասնիկյան Ալ. 1957, Ընտիր երկեր, Երևան, «Հայպետհրատ», 518 էջ [Myasnikyan Al. 1957, Selected Works. Yerevan, "Haypethrat" Publishing House, 518 p. (in Armenian)]:

Մյասնիկյան Ալ. 1984, Երկեր հինգ հատորով, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 464 էջ, հ. 2, Երևան, «Հայաստան» հրատ., 392 էջ [Myasnikyan Al. 1984, Works in five volumes, V. 1. Yerevan, "Hayastan" Publishing House, 464 p., V. 2. Yerevan, "Hayastan" Publishing House, 392 p. (in Armenian)]:

Մյասնիկյան Ալ. 1985, Երկեր հինգ հատորով, հ. 3, Երևան, «Հայաստան» հրատ., 552 էջ [Myasnikyan Al. 1985, Works in five volumes, V. 3. Yerevan, "Hayastan" Publishing House, 552 p. (in Armenian)]:

Մյասնիկյան Ալ. 1986, Երկեր հինգ հատորով, հ. 4, Երևան, «Հայաստան» հրատ., 499 էջ [Myasnikyan Al. 1986, Works in five volumes, V. 4. Yerevan. "Hayastan" Publishing House, 499 p. (in Armenian)]:

Մյասնիկյան Ալ. 2007, Երկեր հինգ հատորով, հ. 5, Երևան, «Մուղնի» հրատ., 520 էջ [Myasnikyan Al., 2007, Works in five volumes, V. 5. Yerevan, "Mughni" Publishing House, 520 p. (in Armenian)]:

Մնացականյան Ա. 1947, Ալեքսանդր Մյասնիկյանի զինվորական գործունեությունը (1947–1921 թթ.), Երևան, ՀՍՍՌ գիտ. ակադեմիայի հրատ., 95 էջ [Mnatsakanyan A. 1947, The Military Activity of Alexander Myasnikyan (1914–1921). Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 95 p. (in Armenian)]:

Մնացականյան Ա. 1955, Ալեքսանդր Մյասնիկյան (Ալ. Մարտունի), Երևան, «Հայպետհրատ», 368 էջ [Mnatsakanyan A. 1955, Alexander Myasnikyan (Al. Martuni). Yerevan, "Haypethrat" Publishing House, 368 p. (in Armenian)]:

Ոսկերչյան Ա. 1974, Ալ. Մյասնիկյանը և գրական հարցերը, Երևան, «Հայաստան» հրատ., 482 էջ [Voskerchyan A. 1974, Al. Myasnikyan and Literary Issues. Yerevan, "Hayastan" Publishing House, 482 p. (in Armenian)]:

Չարենց Ե. 1987, Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 3, Երևան, «Սովետական գրող» հրատ., 544 էջ [Charents Ye. 1987, Collected works in four volumes, V. 3. Yerevan, "Sovetakan Grogh" Publishing House, 544 p. (in Armenian)]:

«Бакинский рабочий», 25. III. 1925 ["Bakinsky Rabochy", 25. III. 1925 (in Russian)].

«Заря Востока» (Тбилиси), 25. III. 1925 ["Zarya Vostoka" (Tbilisi), 25. III. 1925 (in Russian)].

«Правда» (Москва), 26. III. 1925 ["Pravda" (Moscow), 26. III. 1925 (in Russian)].

ИМЕНИТЫЙ АРМЯНИН: АЛЕКСАНДР МЯСНИКЯН

ЭДИК МИНАСЯН

Резюме

Ключевые слова: Александр Мясникян, Нахичевань-на-Дону, Москва, Лазаревский институт, Микаэл Налбандян, Западный фронт, главнокомандующий, председатель ЦИК, председатель Совета народных комиссаров Советской Армении.

Выдающийся советский государственный, партийный и военный деятель, публицист и литературовед Александр Аствацатурович (Фёдорович) Мясникян (псевдоним – Ал. Мартуни, 1886–1925) является одной из крупнейших фигур новейшей истории армянского народа. Его жизнь и многогранная деятельность были тесно связаны с борьбой за свободу и национальное возрождение.

Армяно-русская среда Нахичевани-на-Дону (ныне в составе Ростовской области), обучение в приходских и епархиальных школах (семинариях), а затем в Московском Лазаревском институте способствовали формированию патриотического и национального мировоззрения Мясникяна. Продолжение образования на юридическом факультете Московского университета, а также участие во всероссийских забастовках, демонстрациях и декабрьском вооружённом восстании в Ростове-на-Дону и Москве содействовали формированию его общественно-политических взглядов и становлению в качестве национального революционного и партийного деятеля и организатора.

Участие Мясникяна в Первой мировой войне, а затем в Гражданской против контрреволюционных белогвардейских сил и иностранных интервентов, а также славный путь от унтер-офицера до генерала способствовали проявлению его таланта как военного деятеля.

О его организаторских способностях свидетельствовали партийная, военная и государственная работа на Западном фронте, руководство Минским большевистским комитетом, посты председателя Северо-Западного областного комитета РСДРП(б), председателя Военно-революционного комитета при Минском Совете, главнокомандующего Западным фронтом, первого выборного главнокомандующего Народной армией России, Верховного главнокомандующего вооружёнными силами молодой Советской республики, первого секретаря Московского городского и губернского комитетов РКП(б), председателя ЦИК Белорусской Советской Республики и народного комиссара по военным делам, первого председателя Совета народных комиссаров Советской Армении, первого председателя Союзного совета Закавказской федерации, первого секретаря Закавказского краевого комитета партии. Таков был боевой и политический путь Ал. Мясникяна.

Ал. Мясникян был не только талантливым партийным, государственным и военным деятелем, но и активным общественным деятелем, публицистом, литературным критиком и теоретиком. В 1917–1925 гг. он основал и редактировал большевистские газеты «Звезда», «Молот», «Буревестник» в Белоруссии, «Коммунистический труд» в Москве и другие органы периодики. Заметный след Мясникян оставил и в истории общественной мысли. Его перу принадлежат статьи об Армянском вопросе, изобретении армянского алфавита, а также множество других работ, посвящённых исторической судьбе и культуре армянского народа, к примеру, статьи, посвящённые классикам армянской поэзии. Среди деятелей Советской Армении именно Мясникян первым обратился к проблеме отношений Армении и Диаспоры, посвятив специальное исследование вопросам армянских национально-политических организаций в Спюрке. Его труды были изданы отдельным собранием сочинений (в 5 томах, 1984–1986, 2007 гг.).

Возглавив правительство Советской Армении, Ал. Мясникян приложил немало усилий в направлении восстановления экономики страны, репатриации западноармянских беженцев и установления стабильности. Он стремился объединить армянскую интеллигенцию в Армении и создать необходимые

условия для творческой деятельности. 4–5 июля 1921 г. Ал. Мясникян участвовал в пленарном заседании Кавказского бюро ЦК РКП(б), на котором обсуждался вопрос Нагорного Карабаха, и выступил против решения о включении Нагорного Карабаха в состав Азербайджана. Благодаря его последовательным действиям Азербайджан в июле 1923 г. вынужден был предоставить Нагорному Карабаху статус автономной области в своем составе. В годы работы в Союзном совете Закавказской федерации (1922–1925 гг.) Ал. Мясникян активно занимался развитием народного хозяйства и культурного строительства Армении, Грузии и Азербайджана.

Ал. Мясникян погиб 22 марта 1925 г. в авиакатастрофе близ Тифлиса. Похоронен в Тбилиси, в Коммунарском саду, вместе с другими погибшими. В Ереване его именем названы проспект и площадь, где установлен памятник. Имя Мясникяна носили Минский вагоноремонтный завод (с 1932 г.), площадь и улица в Минске, город Мартуни и село Мартуни в Гегаркуникской области Армении, село Мясникян в Армавирской области, город Мартуни в Нагорном Карабахе, село Мясникяни в Грузии, Мясниковский район Ростовской области России.

Имя Ал. Мясникяна носит Национальная государственная публичная библиотека Республики Армения, где хранится его личная библиотека. Коллекция Мясникяна насчитывает 6707 единиц литературы. Она была передана библиотеке после его смерти в июле 1925 г. вместе с некоторыми его личными вещами.

Жизнь и деятельность Ал. Мясникяна свидетельствует о его беззаветной преданности Родине и готовности служить своему народу.

Эдик Минасян – д. и. н., проф., заведующий кафедрой истории Армении Ереванского государственного университета. Научные интересы связаны с изучением ключевых проблем новейшей истории Армении (с 1918 г. по настоящее время), истории Советской Армении и Третьей Республики, истории героической борьбы армянских женщин и др. Автор 12, соавтор 8 монографий и 300 статей. ORCID: 0000-0003-3206-6103.
eminasyan@ysu.am

THE FAMOUS ARMENIAN, ALEXANDER MYASNIKYAN

EDIK MINASYAN

Summary

Keywords: Alexander Myasnikyan, Nakhichevan-on-Don, Moscow, Lazarev Institute, Mikael Nalbandian, Western Front, Commander-in-Chief, Chairman of the Central Executive Committee, Chairman of the Council of People's Commissars of the Soviet Armenia.

The outstanding Soviet statesman, party and military figure, publicist, and literary scholar Alexander Astvatsaturovich (Fyodorovich) Myasnikyan (pseudonym – Al. Martuni, 1886-1925) is one of the most prominent figures in the modern history of the Armenian people. His life and multifaceted activities were closely connected with the struggle for freedom and the national revival of the Armenian people.

The Armenian-Russian environment of Nakhichevan-on-Don (now part of the Rostov region), education in parish and diocesan schools (seminaries), and later at the Moscow Lazarev Institute contributed to the formation of Myasnikyan's patriotic and national worldview. Continuing his education at the Faculty of Law of Moscow University, as well as participation in all-Russian strikes, demonstrations, and in the December armed uprising in Rostov-on-Don and Moscow, gradually contributed to the development of his socio-political views and revealed his abilities as a national revolutionary and party leader, and organizer.

Myasnikyan's participation in World War I and later in the Civil War against counterrevolutionary White Guard forces and foreign interventionists, as well as his rise from non-commissioned officer to general, demonstrated his talent as a military leader.

His organizational skills were demonstrated by his party, military, and state work on the Western Front, his leadership of the Minsk Bolshevik Committee, and his positions as Chairman of the North-Western Regional Committee of the RSDLP (Bolsheviks), Chairman of the Military Revolutionary Committee under the Minsk Council, Commander-in-Chief of the Western Front, the first elected Commander-in-Chief of the People's Army of Russia, Supreme Commander-in-Chief of the Armed Forces of the young Soviet Republic, First Secretary of the Moscow City and Provincial Committees of the RCP (Bolsheviks), Chairman of the Central Executive Committee of the Belarusian Soviet Republic and People's Commissar for Military Affairs, the first Chairman of the Council of People's Commissars of the Soviet Armenia, the first Chairman of the Union Council of the Transcaucasian Federation, and First Secretary of the Transcaucasian Regional Committee of the Party. Such was the military and political path of Alexander Myasnikyan.

A. Myasnikyan was not only a talented party, state, and military leader but also an active public figure, publicist, literary critic, and theorist. In 1917–1925, he founded and edited the Bolshevik newspapers "*Zvezda*", "*Molot*", "*Burevestnik*" in Belarus, "Kommunistichesky Trud" in Moscow, and other periodicals. He also left a significant mark on the history of social thought. He wrote articles on the Armenian Question, on the invention of the Armenian alphabet, and many other works dedicated to the historical destiny and culture of the Armenian people, for example, articles dedicated to the classics of the Armenian poetry. Among the figures of the Soviet Armenia, Myasnikyan was the first to address the issue of relations between Armenia and the Diaspora, dedicating a special study to Armenian national-political organizations in the Diaspora. His works were published in a collected edition (5 volumes, 1984–1986, 2007).

Having headed the government of the Soviet Armenia, Alexander Myasnikyan made great efforts to restore the country's economy, repatriate Western Armenian refugees,

and establish stability. He sought to unite the Armenian intelligentsia in Armenia and to create the necessary conditions for creative activity. On July 4–5, 1921, Alexander Myasnikyan participated in the plenary session of the Caucasian Bureau of the Central Committee of the RCP (Bolsheviks), where the issue of Nagorno-Karabakh was being discussed and opposed the decision of including Nagorno-Karabakh within Azerbaijan. In July 1923, thanks to his consistent efforts, Azerbaijan was forced to grant Nagorno-Karabakh the status of an autonomous region within Azerbaijan. During his work in the Union Council of the Transcaucasian Federation (1922–1925), Myasnikyan actively contributed to the development of the economy and cultural life of Armenia, Georgia, and Azerbaijan.

A. Myasnikyan died on March 22, 1925, in an air crash near Tiflis. He was buried in Tbilisi, in the Communards' Garden, together with other victims of the crash. In Yerevan, an avenue and a square, where a monument to him is erected, are named after him. The Minsk Carriage Repair Plant (since 1932), a square and a street in Minsk, the town of Martuni and the village of Martuni in the Gegharkunik region of Armenia, the village of Myasnikyan in the Armavir region, the town of Martuni in Nagorno-Karabakh, the village of Myasnikiani in Georgia, and the Myasnikovsky district of the Rostov region of Russia were named after Myasnikyan.

The National State Public Library of the Republic of Armenia, where his personal library is kept, bears the name of Alexander Myasnikyan. The collection of Myasnikyan contains 6,707 items of literature. It was transferred to the library along with some of his personal belongings after his death in July 1925.

The life and activity of A. Myasnikyan demonstrates his selfless devotion to his motherland and readiness to serve his people.

Edik Minasyan – Doctor of Historical Sciences, Professor, Head of the Chair of Armenian History at Yerevan State University. Scientific interests: key issues of the modern history of Armenia (from 1918 to the present), the history of the Soviet Armenia and the Third Republic, the history of the heroic struggle of Armenian women, and others. Author 12, co-author 8 monographs and 300 articles.
ORCID: 0000-0003-3206-6103. eminasyan@ysu.am